ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №2
N ԳՀԾՁԲ-23-12/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26 .12.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից և «ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հայրապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 26.12.2022թ. կնքված N ԳՀԾՁԲ-23-12/1-1 գնման Պայմանագրի (Համաձայնագիր №1 առ 21.02.2023թ.) (այսուհետև՝ Պայմանագիր) 7.8 կետը՝ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին մասնակի լուծել Պայմանագիրը 2 910 000 ՀՀ դրամի չափով՝ Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման («Հայ Զինվոր» ամսագրի հրատարակման ծառայություն) ծառայությունների մատուցման CPV կոդը՝ 79821200/1236, չմատուցված ծառայությունների մասով: Սույն Փոփոխության արդյունքում Պայմանագրի առավելագույն գինը կազմում է 46 560 000 (քառասունվեց միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2.2 Սույն Համաձայնագրի մեջ չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայությունների հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Կոտայքի մարզ,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հատիս Փ./թիվ 1 /64 Աբովյան
Հ/Հ 900011144079	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 1930053693950100
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	ՀՎՀՀ 03541004
	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ